ափսոս, որ խորանների մի մասը թօշնած է, վատ պահուած լինելու պատճառով։ Նորա սիրած գոյների մէջ ամենից աւելի աչքի է ընկնում մոյգ կապոյտը՝ լաճուարդը, որ գործադրում է աւետարանիչների պատկերների համար իբրև ֆոն, այլ եւ բուսական զարդարանքների, խորանների շրջանակազարդերի մէջ։ Բիւզանդական և մեր կիլիկեան շրջանի համար այնքան սիրուած ոսկի ֆոնը վտարուած է մեր նկարչի գործերի մէջ. ոսկին գործադրւում գծերի համար միւս գոյների հետ, յաճախ կարմրի, որ առանձին ազնուութիւն է տալիս նրանց, և նիմբուսների համար, բայց փոշոսկի և ոչ երբեք թերթոսկի։ Կապոյտից յետոյ կանաչն է աւելի շատ գործադրութիւն ստացած. ձօնի մանրանկարի ֆոնը մութ կանաչ է, բաւական մեծ չափով գործադրուած է նաև խորանազարդերի, սիւների և բուսական օրնամենտացիայի մէջ։ Կարմիրը որ մանրանկարչութեան ամենից բնորոշ գոյնն է, համեմատաբար քիչ է գործադրուած, մեծ մասով գծերի և եզերազարդերի համար։ Գործադրուած են նաև սեւն ու դեղինը. առաջինը կերպական մեծ մանրանկարների շրջանակազարդերի և դէմքը բնորոշող գծերի համար, իսկ երկրորդը՝ սիւների, նաև նիմբուսների համար, ինչպէս Երուսաղէմ մտնելու մանրանկարի մէջ, Յիսուսի և Պետրոսի համար։ Գրչով կատարուած զարդարանքները սև են, ինչպէս Մատթէոսի շրջանակն է։

Դեկտեմբեր 1933
Էջմիածին